**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2013թ. թիվ 40-Ա

Ն. ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 32, 34 կետերը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի N 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 2013 թվականի մարտի 15-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի N 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթը համապատասխանում է հաստատության տնօրենի ընտրության կարգի պահանջներին:

2. Նառա Շահենի Մկրտչյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի N 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2013 թվականի մարտի 19-ից:

3. Ն.Մկրտչյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. մարտի 19
ք.Վանաձոր